

5.16. 2008թ. հունիս ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հունիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմային մոտ:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է +27 +30°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +21 +26°C, Սյունիքի նախալեռներում, ՀՀ Լոռու մարզում և լեռնային շրջաններում՝ +17 +22°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունիսի 5-7-ին, 26-28-ին, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում գրանցվել է +30 +35°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +24 +29°C, Սյունիքի նախալեռներում, ՀՀ Լոռու մարզում և լեռնային շրջաններում՝ +22 +27°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում կազմել է +5 +10°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +9 +14°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +14 +19°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է ամսվա սկզբին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է +1 +6°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -2°C, ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ)՝ 0°C), ՀՀ Տավուշի մարզում՝ +4 +9°C, Սյունիքի նախալեռներում՝ +6 +11°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +9 +14°C:

Հունիս ամսվա ընթացքում հանրապետության հյուսիսային տարածաշրջաններում տեղումների քանակը եղել է նորմայից բարձր, կենտրոնական և հարավային տարածաշրջաններում՝ նորմային մոտ և նորմայից ցածր: ՀՀ Տավուշի մարզում այն կազմել է նորմայի 120-200%-ը, լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում՝ 100-170% (Աշոցք գյուղում և ք.Ստեփանավանում (ՀՀ Լոռու մարզ)՝ 65%), Արարատյան դաշտավայրում և ՀՀ Սյունիքի մարզում՝ 30 - 100% (ք.Երևանում՝ 190%):

Հունիսի 8-12-ին, 15-18-ին, 21-23-ին և 28-30-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է անձրև և ամպրոպ:

2-3-ին, 5-ին, 9-ին, 10-11-ին, 15-16-ին, 18-23-ին և 25-29-ին ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Արագածոտնի մարզերում և Արարատյան դաշտավայրում դիտվել է քանու ուժգնացում, արագությունը՝ 10-20 մ/վրկ, պոռթկումները՝ 16-25 մ/վրկ: Հունիսի 9-ին ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ) դիտվել է կարկուտ 10 մմ տրամագծով, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 11 մմ, 11-ին ք.Երևանում՝ 4 մմ, ք.Հրազդանում՝ (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 10 մմ, 12-ին, 21-ին և 23-ին՝ ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ 5-20 մմ, ՀՀ Արագածոտնի և Լոռու մարզերի որոշ գյուղերում՝ 5-24 մմ: Հունիսի 5-ին և 8-ին ք.Տաշիրում դիտվել է մառախուղ 500 մ տեսանելիությամբ, 30-ին ուժեղ անձրև՝ 70 մմ/6 ժ:

Հունիսին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 60-70%-ը, հյուսիսային տարածաշրջանների գետերում՝ 90-110%-ը:

Սևանա լճի մակարդակը հունիս ամսվա ընթացքում բարձրացել է 5 սմ-ով և 2008թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել 1899.26 մ, որը 2007թ. նույն օրվա համեմատ բարձր է 29 սմ-ով:

Հունիսին լճից բաց թողնված ջրի քանակը կազմել է 59.077 մլն. խոր. մ: